ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Դժբախտ պատահար է համարվում արտաքին, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ), չմտադրված, անկանխատեսելի պայմանների և հանգամանքների կուգադիպումը, որոնց դեպքում Ձեր կամքից անկախ վնաս է հասցվում Ձեր կյանքին կամ առողջությանը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա.Ավետիսյան 116/1, 116/5
Հեռ.՝ (+374 60) 50 00 60, (+374 98) 27 72 88
Կայք՝ www.imnairi.am

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Դժբախտ պատահարի հետևանքով՝

- Աշխատունակության ժամանակավոր կորուստ,
- Հաշմանդամության I, II, III կարգ,
- Մահ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Յուրաքանչյուր դեպքի գծով 20,000 ՀՀ դրամ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի Խորհրդի կողմից 25.12.2014թ. թիվ 77 որոշմամբ հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:

ՈՐՔԱՆ Է ԿԱՉՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում անհրաժեշտ է կանգահարել (+374 98) 27 72 88 հեռախոսահամարով,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները,
- Համաձայն ցուցումների հնարավոր է անհրաժեշտություն առաջանա ներգրավել Ոստիկանություն, ԱԻՆ կամ այլ իրավասու մարմինների:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ ներբեռնել այն www.imnairi.am կայքից, ձեռքով լրացնել և լրացված դիմումի լուսապատճենը/լուսանկարն ուղարկել Medical@nairi-insurance.am էլ. հասցեին կամ VIBER հավելվածով՝ (+374 98) 277 283 հեռախոսահամարին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Ապահովագրական հայտի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները ժամանակին չեն ներկայացվել, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի հայտանիշեր ունեցող իրադարձության բնույթի և պատճառների հաստատման համար կամ նախապես ներկայացվել են կեղծ ապացույցներ,
- Գրավոր դիմում ներկայացնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում չեն ներկայացվել հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի, թմրադեղերի, հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի օգտագործման արդյունքում (անկախ օգտագործման քանակից), եթե վերջինս ուղղակի կապված է պատահարի առաջացման հետ,
- Ապահովագրված անձի կողմից ինքնասպանություն (ինքնասպանության փորձ) կամ կանխամտածված անդամախեղություն կատարելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրված անձը հասցվել է այդպիսի վիճակի այլ անձի կողմից,
- Ապահովագրված անձի կողմից կանխամտածված և/կամ հանցավոր գործողությունների կատարման կամ մասնակցության արդյունքում, որոնք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են ապահովագրական պատահարի հետ,
- Ապահովագրված անձն առանց համապատասխան լիցենզիա/որակավորում ունենալու զբաղվել է լիցենզիա (որակավորում) պահանջող գործունեությամբ, որի ուղղակի հետևանքով առաջ է եկել դժբախտ պատահարը,
- Ապահովագրված անձի ցանկացած հիվանդության (վարակի), դրանց բարդությունների, բացառությամբ եթե դրանք հետևանք են դժբախտ պատահարի,
- Դժբախտ պատահարի հետևանքով առողջական խնդիրների չբուժմանը, բժշկի խորհրդին չհետևելուն կամ ոչ ամբողջությամբ հետևելուն, ինչպես նաև առաջացած առողջական խնդիրների բուժումից հրաժարվելուն կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած առողջական խնդիրների բարդացմանը, ինչպես նաև դրա հետևանքով նոր վնասվածքների առաջացմանը,
- Ապահովագրված անձը ցանկացած օդային տրանսպորտում ներգրավվել է որպես օդաչու,
- Ապահովագրված անձի կողմից էքստրեմալ սպորտի տեսակներով զբաղվելու կամ մրցումներին՝ որպես պրոֆեսիոնալ մարզիկ մասնակցության հետևանքով,
- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ազդեցության հետևանքով,
- Քաղաքացիական հուզումների, պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, ահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների անմիջական մասնակցության, ինչպես նաև որպես զինծառայող իր պարտականությունների կատարման արդյունքում,
- «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի Խորհրդի կողմից 25.12.2014թ. թիվ 77 որոշմամբ հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: